ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՏԵՂԵԿԱԳԻՐ
ИЗВЕСТИЯ АКАДЕМИИ НАУК АРМЯНСКОЙ ССР

Հասարակական գիտություններ № 4, 1955 Общественные науки

Վ. Բզոյան

ՀԱՅԿԱԿԱՆ ԿՈԼՏՆՏԵՍԱՅԻՆ ՏՈՒՆՆ ԱԶԳԱԳՐԱԿԱՆ ՏԵՍԱԿԵՏԻՑ

Հայտնի է, որ հայկական հին գյուղերի մեծ մասի բնորոշ հատկանիշը համախմբվածությունն էր, որով գյուղերի հատակագիծը ձգտում էր կլորությունի։ Այդ բանը բխում էր սոցիալական և պաշտպանական նկատառումներից, որ հատուկ է առհասարակ արևելքի ժողովուրդներին։ Պաշտպանական նկատառումով գյուղերը սեղմվում, ճնշվում ու կուչ էին գալիս։ Այդ պատճառով հաճախ փակվում էին գյուղամիջյան անցուղիները և փողոցները։ Կցատներն իրար հետ ներսից կապվում էին պատանցքներով[1]*։ Թաղերի կտուրները հետիոտն երթևեկության հետևանքով երբեմն վերածվում էին «փողոցների»։*

Սովետական կարգերում, երբ այդ սոցիալական և պաշտպանական նկատառումները ինքնին վերացան, գյուղերն սկսեցին ընդունել բազմազան ձևեր։ Նեղ հովիտներում, կիրճային վայրերում և պետական գլխավոր ճանապարհների վրա գտնվող բնակավայրերում առաջացան երկարաձիգ գյուղեր։

Մինչև գյուղերի գլխավոր պլանավորումը, գյուղական բնակավայրերում անձնական շենքերը կառուցում էին և այժմ էլ ոչ պլանավորված գյուղերում կառուցում են ցրված ձևերով։

Անպլանային ձևով զարգացող գյուղերը, հասկանալի է, որ չէին կարող համապատասխանել հասարակության կուլտուրական և կենցաղային աճող պահանջներին։

Գյուղերի պլանավորումը վերացրեց այդ դժվարությունները, մշակվեցին նոր պայմաններ, որոնք համապատասխանում են տվյալ վայրի հասարակության կուլտուր-սանիտարական և վարչատնտեսական պահանջներին։ Երկարաձիգ գյուղերում այժմ դրվում են ռադիոուզելներ, կոլտնտեսականներին ժողովի, աշխատանքի և այլ նպատակով հրավիրելու համար։

Գյուղական հրապարակները տեղադրվում են գլխավորապես գյուղամիջերում։ Հրապարակի մոտ սովորաբար ստեղծվում են այգիներ, որտեղ կանգնեցվում են պետական գործիչների, քաղաքացիական կռիվների և Հայրենական Մեծ պատերազմի հերոսների հուշարձաններ։ Հրապարակի զանազան կողմերում տեղավորվում են կուլտուր-կրթական հաստատությունները, վարչա-տնտեսական հիմնարկները, հյուրանոցները, արհեստանոցները, առևտրական շենքերը և այլն։ Պլանավորման այս ձևը դյուրացնում է կոլտնտեսականների կուլտուրական և այլ պահանջների սպասարկումը։

Լայն և ծառազարդ փողոցները, հրապարակները և նշված շենքերը մեծ մասամբ կերպարանափոխել են հայկական գյուղերի պատկերը։

Սոցիալիստական տիպային գյուղերը պլանավորվելիս՝ մի շարք բնական պայմաններից և հասարակական պահանջներից բացի՝ նկատի են առնվում

---

[1] *Այդ պատանցքները հարևան անտեսությունները կենցաղային և պաշտպանական նկատառումներով իրար հետ կապելու միջոցներ էին և հայտնի էին «ակնատ», «դրիջակ» և այլ անուններով։*

նաև քամիների և ջրերի ուղղությունները։ Անասնապահական շենքերը և կոլտնտեսությունների կալերը տեղադրվում են հարատև քամու հակառակ կողմը, որով կանխվում է փոշու և գոմաղբի հոտի մուտքը գյուղամեջ։ Գյուղով անցնող ջրի մաքրությունն ապահովելու նպատակով տնտեսական շենքերը տեղավորվում են գյուղի եզրին, գետերի ավելի ստորին հոսանքի վրա։ Այստեղ են հարմարեցվում նաև դեպի արոտ տանող անասունների գլխավոր ճանապարհները։

* * *

Որքան որ բազմազան են ռեսպուբլիկայի տնտեսական գոտիները, գրեթե նույնքան բազմազան են այդ վայրերի շինանյութերը։ Դրանով էլ բացատրվում է ժողովրդական ճարտարապետության զանազանությունը տարբեր շրջաններում։

Նախասովետական տարիներին՝ Հայաստանի գյուղական վայրերում շինանյութերի արդյունաբերություն չի եղել, աղյուս-կղմինդրի և կրի չնչին արտադրությունը կենտրոնացած էր մի քանի տեղերում, և նպատակ ուներ սպասարկել քաղաքներին։ Ռևոլյուցիայից հետո, գյուղական վայրերին մոտիկ և առանձին գյուղերում ստեղծված շինանյութերի արտադրության առանձին ճյուղերը մեծապես նպաստեցին շինարարական ձևերի միանմանեցմանը։ Այդ բանի հետևանքով գյուղական շատ վայրերում կավակերտ պատերը տեղի տվեցին քարաշեն-կրաշաղախ պատերին, հողածածկ կտուրները՝ կղմինդրածածկ կտուրներին, ցեխածեփը՝ գաջածեփին և կրածեփին, հողե հատակները՝ տախտակամած հատակներին և այլն։

Այն տարբերությունները, որոնք գոյություն ունեին մինչև 1940-ական թթ. կեսերը, քարագուրկ վայրերի և քարով հարուստ վայրերի միջև, աստիճանաբար վերանում են։

Շինանյութերի արդյունաբերության լայն ցանցավորման շնորհիվ Արարատյան ամբողջ դաշտավայրի շրջանների կավաշեն տներն աստիճանաբար փոխարինվում են քարաշեն տներով։ Լեռնային վայրերում կրաշաղախ պատերով շենքերն առավել ցրտակայուն են դառնում։ Տուֆը չափազանց հեշտացրել է քարտաշների ու որմնադիրների աշխատանքը և էժանացրել շինարարության արժեքը, թեև կան շրջաններ ու վայրեր, ուր դեռևս իշխողը տեղական շինանյութերն են, տեղական տնաշինության տրադիցիաների պահպանմամբ։

* * *

Հին բնակարանների ֆունկցիոնալ արագ փոփոխությունները, որ կատարվել են Հայաստանում, կուլտուրական մեծ հեղաշրջումների արդյունք էին։ Հին կենցաղն իր պահպանողականությամբ և սոցիալ-տնտեսական պատճառներով շինարարության մեջ ֆունկցիոնալ արագ փոփոխություններ չէր առաջացնում։ Հայ իրականության մեջ այդ պահպանողականությունն ընդգծելի էր մինչև XIX դարի կեսերը, մինչև հայկական բուրժուական ազգի առաջացման շրջանը։ Դրա հիմնական պատճառը Հայաստանի արևելյան մասում պարսկական և արևմտյան մասում թյուրքական միջնադարականությունն էր։

Դեռևս XIX դարի 20-ական թվականներին Ռուսաստանին միացած Արևելահայաստանում կապիտալիզմի զարգացման հետևանքով քաղաքային շի-

նարարության տրադիցիաներն աստիճանաբար թափանցում էին գյուղական բնակավայրերը։ Գյուղական հարուստ խավերի մեջ լուսամուտավոր տներն սկսել էին մոդա դառնալ. այդ պրոցեսի արագացմանը մեծապես նպաստում էր ռուսական համանման շինարարական կուլտուրան։

Լոռիում օդաները[1] կղմինդրածածկ դառնալու հետևանքով լուսամուտավոր էին դարձել։ Կարսի նահանգում, Սևանա լճի ավազանում, Շիրակում, Արագածոտնի գավառներում, Ախալքալաքում, Ծալկայում, ինչպես նաև Արևմտահայաստանում՝ Վասպուրականում, Տարոնում, Կարինում և այլուր, օդաներն սկսել էին ֆունկցիոնալ փոփոխության ենթարկվել։ Այս գավառներում աստիճանաբար առաջանում էին լուսամուտավոր սենյակներ, որոնք մտնելով հին տան ընդհանուր կոմպլեքսի մեջ, կրկնում էին օդայի կառուցվածքին հատուկ դրեթե բոլոր ձևերը։ Բացառվողն օդայի երդիկն էր, որին փոխարինում էին որոշ տեղերում փոքրիկ և այլ տեղերում միջակ մեծության լուսամուտները։

Օդայի այս ֆունկցիոնալ փոփոխման պրոցեսը դադարեց առաջին իմպերիալիստական պատերազմի տարիներին, ժողովրդի խաղաղությունը խանգարվելու պատճառով։

Սովետական կարգերի հաստատումից հետո օդայաձև սենյակների էվոլյուցիայի այդ պրոցեսը նոր թափ ստացավ։

Օդայի ձևը կրկնող սենյակների՝ ամառնատների բնորոշ կողմն այն էր, որ սրանց համար որպես միջանցք ծառայում էին հին տների ընդհանուր սրահները։ Մարդկանց, անասունների և թռչունների ելևմուտը դեռևս կատարվում էր այդ սրահներից՝ բակ-շվաքներից (նկ. 1)։

Սրանք մինչև 1930-ական թթ. զուրկ էին նախասենյակներից, որոշ տեղերում՝ նաև տախտակե հարթ հատակներից։

Գոմի օդաներն անցյալում ունեին 2—4 անշարժ և իրար նկատմամբ զուգահեռ որմնաթախտեր։ Չորս թախտեր ունեցողներից երկուսը ցածր և երկուսը բարձր էին լինում։ Ինչպես երկու, այնպես և չորս թախտանի օդայի երկայնքով մեկ մի մետր լայնությամբ հողե հատակով նավ էր լինում, որով օջախը միացվում էր գոմի հետ։

Մեր օրերում, երբ սենյակներն օդայաձևության կրկնության պրոցեսումն էին գտնվում, վերին թախտերը վերացան։

Անասնապահական շրջաններում սենյակների օդայացման պրոցեսը բխում էր զբաղմունքի պրոֆիլից։ Անասուններով հարուստ ընտանիքներում, երբ նոր առաջացող սենյակն իր դռնով կապվում էր անասնատար միջանցքի (բակի) հետ, հողե նավը մի տեսակ միջոց էր՝ թախտերը մաքուր պահելու համար. այս դեպքում անասնապահը հանգստանալու համար սենյակ մտնե-

[1] Օդա էր կոչվում այն սենյակը, որը տեղավորվում էր գոմի մի ծայրում և տաքանում անասունների շնչով։ Օդան լուսավորվում էր իր առաստաղի հարավային և երբեմն էլ արևելյան ծայրից բացված երդիկով։ Ֆունկցիոնալ իմաստով, օդան նախ և առաջ եղել է տան ծառաների հանգստարանը, ննջարանը և տան համար՝ հյուրանոց։ Օդայի ամենանշանակալից ֆունկցիան մի տեսակ ակումբ լինելն էր, որտեղ տղամարդիկ հավաքվում, զրուցում, զուսանական երգեր ու հեքիաթներ էին լսում, թատերական և ժողովրդական խաղեր դիտում և այլն։ Որոշ գավառներում օդան XIX դարի վերջերից սկսած դարձել էր գերդաստանական կամ փոքր ընտանիքի թե աշխատանոցը և թե ննջարանը։

լիս կարող էր ոտնամանները չհանել։ Այնտեղ, ուր հողե հատակով նավերը փոխարինվել էին տախտակամած նավերով, ելևմուտը պահանջում էր ոտնամանները հանել։ Այս վերջին հանգամանքը թելադրում էր սենյակի մուտքը տան ընդհանուր միջանցքի վրայից տեղափոխել բաց բակի վրա և ստեղծել հանդերձարան։



Նկ. 1. Ամառնատան առաջացումը փակ բակի վրա. 1. մառան, 2. օդա, 3. թոնրատուն, 4. դոմ, 5. փարախ, 6. բակ (շվար), 7. ամառնատուն, 8. դավիթ (չարդախ)։

Սկզբնական տարիներին ֆունկցիոնալ առումով նման փոփոխության ենթարկվեցին նաև նախկին գլխատուն (=հացատուն, թոնրատուն) ննջարան-խոհանոցները։ Հայաստանի գրեթե բոլոր գավառներում՝ պահանջ և հնարավորություն ունեցող ընտանիքները թոնրատները վերածում էին սենյակի։ Թոնիրները թոնրատներից հեռացվում էին և պատերից լուսամուտ բացում։ Վերջիններիս հետևում էր առաստաղների մաքրումը մրից և պատերի սվաղումն ու սպիտակեցումը։ Թոնիրն այստեղից մղվում էր դուրս, դեպի բաց բակը, տեղավորվում անկյունային պատերի վրա կառուցած «հացի չարդախներում» (նկ. 2), կամ մի փոքրիկ սենյակում։ Հարթ տախտակամած և հո-

դն հատակներով ամառնատներում (սենյակներում) և թոնրատներում դրվում էին փայտե շարժական մեծ թախտեր, իսկ ավելի ուշ՝ նաև մետաղե մահճակալներ։ Հանդես էին գալիս տեղական ոճով պատրաստված պահարաններ, որոնք փոխարինում էին զգեստների տրադիցիոն սնդուկներին, ինչպես նաև



Նկ. 2. Նոր տիպի տան կոմպլեքս, որտեղ թոնրատան փոխարեն «հացի չարդախ» է առաջացել։ 1. փոքր սենյակ, 2. միջանցք, 3. մեծ սենյակ, 4. կովանոց, 5. հացի չարդախ, 6 և 7. մեծ ու փոքր թոնիրներ։

օդանների և թոնրատների պատուհաններին ու դռներակներին։ Խոնչա կոչված խիստ ցածրառտ սեղաններին փոխարինում էին ժամանակակից սեղանները, օջախներին ու թոնիրներին՝ թիթեղյա վառարանները և այլն։ Ինչպես օգայանման սենյակները կրկնում էին օդանների ստրուկտուրան, այնպես էլ դրանք կրկնում էին օդայի կահավորումը։ Փռոցներից՝ թաղիքները, կապերտները և գորգերն օդայից անցնում էին նորաձև սենյակները։ Խսիրները վերանում էին։ Անկողինները հավաքվում էին նույն տեղում և ծալք էին կազմում, կամ դրվում ծալքի շարժական պահարաններում։ Ավելի ուշ՝ անկողինները կահավորում էին արդեն քաղաքային ձևերով՝ թախտերի կամ մահճակալների վրա։ Օդային հատուկ մեծ բարձերը դրվում էին թախտերին՝ նստելիս հենվելու համար։ Սկսած 1940-ական թվականների կեսերից, այդ տիպի սենյակներում մասսայորեն մուտք գործած մահճակալներն ու մյուս կահկարասիները դուրս մղեցին թախտերը և մնացած հին կարասիները։

Ուշագրավ է, որ օդայի ձևը կրկնող սենյակներին կից 1930-ական թվականներին առաջանում էին պատշգամբներ՝ գավիթ չարդախներ և ռուսական՝ ավելի նեղ պատշգամբներ։

Շինարարական այս բոլոր ձևերը, հասկանալի է, դալիս էին պատմությանը հանձնելու ժամանակավոր բնույթի վերոհիշյալ շենքերը։

* * *

Հայկական ժողովրդական շենքերի այդ ներքին վերափոխումները առաջին քայլերն էին՝ կուլտուրական պահանջմունքները բավարարելու, հնից դեպի նորը անցնելու ուղղությամբ։

Կոլտնտեսային շենքերի վերակոմպլեքսավորումը, որը մասնավորապես մեծ թափ ստացավ հետպատերազմյան տարիներին, օժտված է ավելի մեծ

մուշտարի առավելություններով։ Այս երկրորդ կառույցի համար տիպական է քաղաքային ձևերի կամ ավելի լավ է ասել՝ ճարտարապետական պատրաստի նախադծումների կիրառումը գյուղում։ Հաշվի առնելով ժողովրդի շինարարական հին ու նոր լավագույն տրադիցիաները, դրանց համեմատ ստեղծվում են տնտեսական ու աշխարհագրական տարբեր գոտիների համապատասխանող շենքերի կատարելագործված կոմպլեքսներ։

Քանի դեռ գյուղական որոշ բնակավայրերում գյուղերի պլանավորում չի կիրառված, ժողովրդական շինարարությունն ընթանում է ինքնավերակոմպլեքսավորման ուղիով։ Կոլտնտեսականները նոր շենքեր կառուցելիս օգտագործում են հին ձևերի լավագույն տրադիցիաները և նոր ճարտարապետության միջոցով մուտք գործած նորությունները։ Նոր կոմպլեքսավորման ընթացքում մի կողմից փոխվում են շենքերի հին հատակագծերը և մյուս կողմից տեղի է ունենում բնակարանների ու տնտեսական շենքերի իրարից անջատվելու պրոցեսը։ Հատակագծի մեծ մասը ձգտում է քառանկյունու, որ հին հայկական տների համար բնորոշ չի եղել։ Քառանկյունու ծայրերից մեկն զբաղեցնում են բնակելի և մյուսը տնտեսական շենքերը։

Երբ նորակառույց բնակարանը գրված է լինում տնամերձ հողամասի մի ծայրի կենտրոնում, կողքերին հետագա շինարարության համար լայն հնարավորություններ են նախատեսվում։

Դաշտային շրջաններում տնամերձ հողամասի լայնքի ուղղությամբ դասավորվում են բնակարանները, իսկ երկարությամբ՝ տնտեսական շենքերը։ Դրանով՝ շենքերի կոմպլեքսն ուղղանկյուն ձև է ստանում։ Այս երկու գծերում էլ հիմնական նորույթը բնակարանների մաքրության ապահովումն է։ Այս հանգամանքը նկատի ունենալով՝ 1930-ական թթ. ճարտարապետությունը որոշ գյուղերում անասնատար առանձին ուղիներ էր ստեղծում, որով անասունները նախրարաշերից ու փողոցներից հասնում էին գոմը։ Սակայն հետագայում այս սիստեմը վերացվեց, նկատի ունենալով տերիտորիալ շռայլումները։

Վերակոմպլեքսավորման մեթոդի կիրառմամբ՝ փոփոխություններ են կատարվում տնտեսական շենքերի և բնակարանների ծավալային հարաբերությունների մեջ. հին տնտեսական շենքերի հաշվին աճում են բնակելի շենքերը։

Նկատելի է, որ լեռնային վայրերում՝ գյուղերի պլանավորումը դանդաղ ընթանալու պատճառով, շենքերն ավելի շատ աճում են ինքնակոմպլեքսավորման կարգով, մինչդեռ դաշտային շրջաններում և շինանյութերով հարուստ վայրերում ճարտարապետական նախագծերով պատրաստվող շենքերը գերակշռում են։

Որոշ տեղերում՝ դեռևս կարելի է հանդիպել փակ բակերի մնացուկների, թեև կան նաև փակ բակերը վերակոմպլեքսավորելու նոր ձևեր։

Այդ նոր ձևի «բակերը» ցածր և քամիները կանխելու միջոցներ են։

Դաշտային շրջաններում նոր կոմպլեքսավորվող շենքերի համար բնորոշ է տնտեսական շենքերը բնակարաններից բաժանող և մեքենաների ու սայլերի համար անցումի ծառայող հովարանը կամ դարպասը։ Հովարանը փակ բակի այլափոխման մի ձևն է, որ վաղուց ի վեր շատ շրջաններում անջատված է բուն շենքերից։

Կոլտնտեսային ժամանակակից շենքերը ներքին կահավորման ու սարքավորման տեսակետից ավելի են նմանեցվել, քան արտաքին կառուցվածքի

տեսակետից։ Արտաքին տարբերությունները լինում են ազգային ոճի մի քանի վարիանտներից, ինչպես նաև ոչ-ազգային ձևերի և ազգայինի միաձուլումից։ Այդ տարբերանշող ձևերը հետևյալներն են (մենք նկատի ունենք և՛ բնակարանները և՛ տնտեսական շենքերը).

ա) Քարաշեն, կղմինդրածածկ-թիթեղածածկ երկթեք կտուրներով շենքեր, որոնք որպես տիպային օրինակներ, տարածում են գտել ամբողջ ռեսպուբլիկայում։ Որպես ընդունված ձևեր, որոնք անընդհատ փոխարինում են հին ձևերին։ Շինարարության այս տիպը այժմ ամենից ավելի տարածված է Լոռիում, Մեղրիում, Իջևանում և Ղարաբաղում։


Նկ. 3. Քարաշեն շենք՝ ձեղնահարկով


Նկ. 4. Քարաշեն շենք՝ կլորավուն կտուրով

բ) Քարաշեն, հողածածկ ուռուցիկ կտուրներով շենքեր, որոնք հատուկ են անտառազուրկ նախալեռնային ու մանավանդ լեռնային վայրերին՝ Արագածոտնին, Փամբակին, Սևանա լճի ավազանի մի քանի շրջաններին, Շիրակին, Ախալքալաքին, և այլն (Նկ. 4)։

գ) Հում աղյուսե և կավակերտ հարթ կտուրներով շենքեր, որոնք հատուկ են ցածրադիր, անտառազուրկ վայրերին՝ Արարատյան հարթությանը և մի քանի այլ շրջաններին՝ Զանգեզուրին, և այլն (Նկ. 5)։


Նկ. 5. Հում աղյուսով կառուցված շենքի տիպ՝ հարթ կտուրով

Ժամանակակից կոլտնտեսային հայկական գյուղերում կան մեկ հարկանի աննկուղ բնակարաններ, որոնք ամենատարածվածներն են ռեսպուբլիկայի և Վրացական ՍՍՌ Ախալքալաքի ու Բոգդանովկայի հայաբնակ վայրերում, մեկ հարկանի նկուղավոր կամ մեկուկես հարկանի բնակարաններ, որոնք հատուկ են շոգ ու բարեխառն կլիմա ունեցող այգեգործական շրջաններին, երկհարկանի բնակարաններ, որոնք առանձին տարածում ունեն դաշտային ու նախալեռնային շրջաններում։

Վերևում մատնանշվեց, որ հայկական բուն ժողովրդական տունը ժամանակակից տներից տարբերվում էր համախմբվածությամբ, մարդկանց և անասունների համար ունենալով մի ընդհանուր դուռ և մի ընդհանուր սրահ (միջանցք)։ Այդպիսի համախմբվածությունն այժմ մեծ մասամբ վերացված է։ Գոմը և թոնրատուն-խոհանոցն անջատված են մարդկանց ծառայող միջանցքներից։ Նոր տան հատակագիծը հնի (գլխատուն-ննջարանի համար) բնութագրական քառակուսի ձևից ձգտել է քառանկյունի ձևի, ըստ որում տնտեսական շենքերը մեծ մասամբ մղվել են դեպի այդ քառանկյան մի ծայրը։ Տնտեսական օժանդակ շենքերի անջատմամբ նախկին «մարդատար-անասնատար» ընդհանուր միջանցքները վերածված են ժամանակակից միջանցքների, որոնք ինչպես յուրահատուկ է տնամերձային մի հարկանի, մեկ և երկու սենյակից բաղկացած անհատական տներին, տեղադրվում են մեկ սենյակ ունենալու դեպքում դրա ծայրին, իսկ երկու սենյակ ունեցող տան մեջ՝ սենյակների արանքին։

Երկհարկանի շենքերի մեծ մասը երկրորդ հարկում կրկնում է առաջին հարկի հատակագիծն առանց փոփոխության։ Դրանք ինչպես առաջին, այնպես էլ երկրորդ հարկում ունենում են երկուական սենյակ, մեկական միջանցքներով։ Սրանց անպայման ուղեկցում են առաջին և երկրորդ հարկերի հավասարաչափ պատշգամբները։ Սանդուղքները տեղադրվում են գլխավորապես բակի կողմից։

Վերջին տարիներին կառուցվել են երկհարկանի այնպիսի բնակարաններ, որոնց պատշգամբները տեղավորված են քառակուսի հատակագիծ ունեցող շենքի մի անկյունում։ Այդպիսի շենքերի համար բնութագրականը միջանցքների մերժումն է և նախասենյակների առաջացումը։

Քառակուսի կամ մոտավորապես քառակուսի հատակագիծ ունեցող երկհարկանի տների ստորին հարկերը սովորաբար օգտագործվում են որպես կովանոցներ, մառաններ, մարագներ, ցախանոցներ, հավանոցներ։ Այստեղ չեն մտնում միայն թոնրատները։ Այսպիսի պարագաներում թոնրատան ֆունկցիան կատարում է շենքից մի փոքր հեռու կառուցված ցախածածկ հյուղակը։

Ինչպես օդայանման սենյակները, այստեղ էլ նոր բնակարաններն աստիճանաբար փոխեցին կահավորման ձևերը։ Կահավորման քաղաքային ձևերը լայն տարածում ստացան։ Եթե մի կողմ թողնենք միմյանցից բաժանող չնչին ոճային տարբերությունները, կտեսնենք, որ սենյակների կահավորման նոր ձևերը բոլոր շրջաններում հիմնական գծերով նմանեցված են։

Բնակարանների կահավորման բնագավառում թեև կան տարբերություններ, որոնք երբեմն բխում են բնակչության տեղական ճաշակից (և որին երբեմն հարմարեցվում է տեղական արտադրությունը), բայց բնորոշն այն ընդհանրությունն է, որն արդեն հատուկ է ամբողջ ռեսպուբլիկայի բնակչությանը՝ հայերին, ռուսներին, հույներին, ասորիներին, մասամբ և քրդերին։

Մետաղե մահճակալների ներթափանցումով ամենից առաջ փոխվեցին անկողինների ձևերը։ Հողե հատակին պառկելու համար հարմարեցրած նախկին լայն և բրդե հաստ ներքնակները ու վերջիններիս լայնքին հավասար բրդե և փետուրե մեծ բարձերը փոխարինեցին մահճակալներին համապատասխանող մանր ներքնակները, բրդալից և փետրալից սովորական բարձերը։ Այնտեղ, ուր մուտք են գործել մահճակալներ, ամբողջապես վերացել են անկողինների ծալք դնելու սովորությունները, որով և հիմնովին փոխվել են

անկողինների ծածկոցները զարդարելու ձևերը։ Ի հայտ են եկել մահճակալի նոր ծածկոցներ, որոնք զարդարվում են աղջիկների ու կանանց ձեռքով պատրաստված եզրազարդ ժանյակներով։ Բարձերը ծածկվում են ասեղնագործ ծածկոցներով։ Շատացել են ասեղնազարդ-բարձիկները, մահճակալների սնարները զարդարող ասեղնագործությունները և այլն։ Սենյակում տեղավորված թախտի (կուշետկա) համար,— որը պահպանում է կապերտյա կամ գորգե փռոցները,— լայն տարածում գտան զարդարող մութաքաները, ասեղնագործ բարձիկները և այլն։

Նոր սենյակներում տախտակամած հատակների ու մահճակալների առկայության հետևանքով փսիաթների և թաղիքների արտադրությունն ամբողջովին դադարեց (խսիրները երբեմն գործածվում են աղունը չորացնելու համար)։

Զգեստների ու ամանների համար հատուկ պահարանները, կամոդներն ու ճաշի սեղանները, տեղական և գործարանային զանազան ձևերի նստարանները, ինչպես և գրադարակներն ու գրքի պահարանները, ռադիոընդունիչներն ու բարձրախոսները, արդուզարդի սեղանները՝ հայելիներով ու այլ անհրաժեշտ պարագաներով և այլն, հիմնովին փոխեցին կոլտնտեսային հայկական գյուղական բնակարանների ներքին կահավորումը։

Ուշադրավ են բնակարանների պատերի հարդարման արդեն ընդհանրացած ձևերը՝ երկրի ղեկավարների նկարներով, ընտանեկան լուսանկարներով, ձեռագործներով, բանվածքներով, գորգերով ու ջիջիմներով։

Թիթեղյա վառարանների, պրիմուսների, նավթավառների. էլեկտրոէներգիայի օգտագործմամբ՝ պլիտաների մուտքը գյուղերում՝ նվազեցրին ջեռուցման ու կերակուր պատրաստելու հին միջոցների՝ թոնիրների, օջախների, կրակարանների և քուրսիների[1] դերը, որոնց հատ ու կենտ մնացուկները միայն կարելի է տեսնել հայկական կոլտնտեսային գյուղում։

* * *

Հայրենական պատերազմի նախօրեին և դրանից հետո գյուղական բնակարանային շինարարության մեջ զգալի բեկում առաջացավ։ Ամենուրեք նկատվում է քաղաքային ձևերի կիրառումը։ Շենքերն արտաքնապես ևս սկսել են նմանեցվել։ Թեպետ արտաքին ճարտարապետական տեսակետից այդ ընդհանրությունն արդեն առկա է, այնուամենայնիվ շինարարական տեխնիկայի մեջ դեռևս կան զանազանություններ։ Դրանք երևան են գալիս հատկապես այն դեպքում, երբ շինարարությունը կատարվում է տարբեր շինանյութերով և տեղական տրադիցիաների պահպանումով։ Տրադիցիաները շեշտված կերպով պահպանվում են առանձնապես տնտեսական շենքերի գծով։

Լեռնոտ վայրերում կրաշաղախի պակասը, դաշտային շրջաններում քարի բացակայությունը, որոշ շրջաններում տուֆը և այլ շրջաններում բազալտը, պատերի տարբեր ձևեր են թելադրել։ Լեռնային շրջանների մեծ մասում դեռևս հարատևում են քարաշեն պատի մեջ խճախառն ցեխ լցնելու սովորությունները։

Արարատյան հարթության վրա գտնվող շրջաններում թեև տնտեսական

[1] Քուրսին քառակուսի, կարճ ոտքերով, չուրջ 1×1մ մեծության սեղան է, որը դնում էին թոնրի վրա, ծածկում էին կապերտով և նստելով տակը՝ տաքանում։

շենքերը գրեթե ամբողջապես հում աղյուսից են պատրաստում, սակայն բնակարանների զգալի մասը տեղական տուֆով կամ Արթիկի վարդագույն տուֆով է կառուցվում։ Քարաշեն նկուղավոր կամ երկհարկանի շենքերը տարեցտարի շատանում են։

Այս շրջանների բնակարանային շինարարության մեջ իբրև հնի մնացուկ, կարելի է մատնանշել հատ ու կենտ կավակերտ տները, որոնք կառուցվում են միայն ընտանիքի ուժերով և կամ միայն «պատ դնող» վարպետ հրավիրելով։

Բացառությամբ կավակերտ շենքերի, մնացած բոլոր դեպքերում հիմնական աշխատանքները կատարվում են դրսից հրավիրված վարպետների և բանվորների միջոցով, ընտանիքի չափահաս անդամների մասնակցությամբ։

Թե՛ բնակարանների և թե՛ տնտեսական շենքերի պատերի հիմքերը խորությամբ ամենուրեք հասնում են 40—50 սմ-ի։ Կավակերտ-աղյուսաշեն տների համար ծուծի մեջ բնորոշը մանր քարերի հետ ցեխալիցք անելն է։ Սրանք սովորաբար քարաշեն պատերի հիմքերից ավելի լայն են լինում (երբեմն 80—90 սմ), որոնց վրա 70 սմ-ից մինչև 1 մ բարձրացող պատը ներսից ու դրսից ցոկոլով է վերջանում։

Սեյսմիկ նկատառումներով հայկական կոլտնտեսային տների շինարարության մեջ օգտագործվում են պատը կայուն պահող գոտիների հնագույն ձևերը [1]։

Լուսամուտների գոտիները, երբ մի կապով են կապվում, միաժամանակ դառնում են կամարներ (կատարներ)։ Անկյունային կապերը դրվում են դրսից և միացման տեղում իրար ագուցվում են ու մեխվում։ Զուգահեռ դրվող գոտիները՝ բացի անկյունային ագուցում-մեխումից, միմյանց կապում են միջանկյալ փայտե կապերով, որոնք ուժեղ ցնցումների ժամանակ ավելի լավ են պաշտպանում պատերը։ Պատահում է, որ այս գոտիները պատերի մեջ են դրվում 2—3 տեղ՝ հիմքից մի քիչ բարձր, պատուհանների կատարին և պատերի վերին մասերում։

Փայտե գոտիները գրեթե համահայաստանյան բնույթ ունեն, բացառությամբ լավորակ քարով հարուստ շրջաններից, որոնք դիմում են պատը պաշտպանող մի այլ հնագույն միջոցի՝ պահանգին [2]։

Այնտեղ, ուր պատը բարձր է կամ նեղ, և կամ ենթադրվում է, որ վատ է պաշտպանված, պատի ամբողջ լայնքով 15—20 սմ հաստության և 25—30 սմ լայնության քարե և կամ հաստ ու լայն սալաքարե պահանգ են դնում։ Պահանգը մի ծայրով 25—30 սմ դուրս է գալիս դեպի շենքի ներսը, որի վրա տակավին էլեկտրիֆիկացիայի շենթարկված շրջաններում ճրագ են դնում, իսկ մյուս ծայրը նույնքան՝ դուրս է գալիս դեպի շենքի դրսի երեսը։

Ցեմենտի արտադրության զարգացման հետևանքով վերջին տարիներին փայտե կապերը և պահանգները որոշ քարաշեն շենքերում փոխարինվել են ցեմենտ-բետոնային գոտիներով, որոնք առավել հաստատուն միջոցներ են բնակարանները երկրաշարժից պաշտպանելու համար։

Բնակարանների ներսում ծեփը կատարում են կիր ու ավազով, գաջով,

---

[1] *Г. Р. Мушегян*, О некоторых вопросах сейсмостойкости древнеармянских архитектурных сооружений, Отдельный оттиск из „Вопросов сейсмостойкого строительства", Ереван, 1949, стр. 116—117.

[2] *Т. Тораманян*, Материалы по истории армянской архитектуры, том I, Ереван, 1942, стр. 144.

շինարարական սպիտակ հողով, ինչպես նաև հարդախառն կավահողով։ Շահումյանի, Հոկտեմբերյանի, Արտաշատի, Էջմիածնի և Վեդու շրջանների գյուղերում հարդախառն ցեխով սվաղվում են նաև այն պատերի դրսի երեսները, որոնք կավակերտ կամ հում աղյուսաշեն են։ Բնակարանների ներսում ծեփը ներկվում է կավիճով, կրով, ինչպես նաև յուղաներկերով։

Ժամանակակից բնակարանների և օժանդակ շենքերի ծածկերը ըստ ձևի կրել են որոշ փոփոխություններ։ Ձեղունի հաստ շինանյութեր են պահանջում այն շրջանները, ուր կտուրի հողը անձրևաջուրը վատ պահելու պատճառով հաստ շերտ է կազմում։ Նման վայրերում տախտակապատ առաստաղից բացի կան նաև, այսպես կոչված, ձեղուն-առաստաղավոր սենյակներ։ Այս սենյակների գերանները սրբատաշ են լինում։ Սրանց վրա փռվում են տաշված տախտակներ. գերանները ցածից երևում են։ Այդ երկու դեպքումն էլ տախտակներին ակոսավոր նախշեր են արվում։

Սակավ հողով ծածկվող կտուրներ ունեցող վայրերում և թիթեղապատ ձեղուններ ունեցող բնակարանների գերանները բնականորեն բարակ են լինում։ Հաստ տախտակները դյուրությամբ ծառայում են որպես գերաններ, որոնց վրա փռվում են կամ անտաշ տախտակներ (և ունենում են տախտակամած առաստաղ) և կամ ա) սրբատաշ տախտակներ, բ) եղեգն և գ) ծածկի եղեգնահյուս «խսիրներ», առանց տախտակապատման։

Արդի առաստաղներն առհասարակ լինում են երեք ձևով. ա) ձեղուն-առաստաղներ, բ) տախտակամած առաստաղներ և գ) գաջածեփ կամ քաթանապատ առաստաղներ։

Տնտեսական շենքերն ունեցել են և ունեն միայն ձեղուն-առաստաղ, առանց հղկման. թեև մասնակի նկարազարդումներ արվում են։

Բնակարանների և տնտեսական շենքերի ձեղունների ու ձեղնահարկերի փոփոխումներն առաջացրել են կտուրների ձևերի որոշ փոփոխություններ։ Լեռնային վայրերի որոշ գյուղերում դեռևս հարատևում են գմբեթաձև հողածածկ կտուրները, թեև նորերը չեն կառուցվում։ Միաթեք ծեփված կտուրների նմուշներ կան շոգ վայրերում, ուր ծեփված կտուրը կաթելու վտանգից ազատ է։ Այս միաթեքությունն արվում է միտումնավոր կերպով՝ ձեղունի անհավասարաչափ բարձրությունից կամ կտուրի անհավասարաչափ ծեփումից։

Կղմինդրապատ և թիթեղապատ միաթեք, երկթեք և, մանավանդ, քառաթեք կտուրներն առանձին տարածում են գտել աղյուս-կղմինդրի զարգացած արտադրության վայրերում և առհասարակ՝ հանրային շինարարության գծով։

Մի շարք շրջաններում բնակարաններն ու տնտեսական շենքերի մի մասը պահպանում են իրենց կտուրի տրադիցիոն հարթ ձևերը։

Նկատելի է, որ սևահողային շրջաններում, անշուշտ անձրևաջուրը ներծծելու հետևանքով, ժողովրդական շենքերի մեծ մասը պատեզրային պսակների ու ջրորդանների սիստեմ չունի։ Այդ պատճառով այստեղ որոշ ժամանակից հետո տեղի են ունենում ձեղունի փտումներ ու պատերի փլումներ։ Նույնը չի կարելի ասել այն շրջանների մասին, ուր հողը կավային է։ Այստեղ պատերները պաշտպանվում են ջրորդաններով և կավապատ, 15—20 սմ բարձրություն ունեցող պսականման երիզներով։ Վերջիններս անձրևաջրի հոսանքը ետ են մղում դեպի ջրորդանները։ Պաշտպանական այս եղանակը դաշտային շրջաններում առաջացել է կավակերտ և հում աղյուսաշեն պատերի համեմա-

տաբար ավելի արագ քայքայման վտանգից, ուր կորստի է մատնվում ոչ միայն պատը, այլև շինանյութը։

Գյուղական տան ձեղունը կառուցելու համար սովորաբար գործածվում են՝ հեծաններ, մարթակներ, եղեգն, եղեգնից հյուսված խսիրներ, ծղոտ, խոտ, հարգ, ծառերի մանր ճյուղեր և այլն։ Այդ ձեղունանյութերի վրա տեղ-տեղ միայն հող են լցնում, որոշ տեղերում կիսացեխ, հող և հարգախառն ցեխ։ Ձեղնահարկերի համար գործածվում են՝ փայտ, կղմինդր, էթերնիթ կամ թիթեղ։

Անտառների բացակայության հետևանքով, հին գյուղերի բնակարաններում տախտակապատված հատակները հազվագյուտ էին։ Բացի գոմի օդանների մի մասից և հատ ու կենտ լուսամուտավոր սենյակներից, աշխատավոր բնակչությունը մեծ մասամբ քնում էր հողե հատակների վրա, գլխավորապես թոնրատներում։ Տախտակե հատակներին փոխարինում էին բավական զարգացած ու բազմապիսի փոցները՝ հաստ փսիաթներն ու թաղիքները, կապերտները, ջեջիմները, գորգերը և այլն, իսկ նստելու համար՝ մինդարներն ու դմփիկները։

Սովետական շրջանում՝ տրանսպորտի արագ զարգացման հետևանքով, երբ արդեն անհնարին չէ փայտանյութի հայթայթումը, ժամանակակից բնակարանների համար բնորոշ դարձան տախտակամած հատակները։ Հողե հատակով շենքերի մեծ մասը տնտեսական շենքերն են։ Տախտակե հատակ ունեցող բնակարանների զարգացմանը որոշ չափով նպաստեցին երկհարկանի կամ նկուղավոր շենքերը, որոնք ըստինքյան պահանջում են տախտակամած հատակներ։

Այգեգործական շրջաններում նկուղաղուրկ երկհարկանի տների առաջին հարկը փոխարինում է նկուղին։

Լեռնային և ցուրտ սարահարթ վայրերում առանձնապես տարածված են աննկուղ բնակարանները։ Տնտեսության երկրագործական ու անասնապահական պրոֆիլը նկուղների սուր պահանջ չի առաջացնում, որովհետև այդ զբաղմունքներից ստացված մթերքները գետնեբեսյա մառաններում պահվում են առանց փչանալու։

Այս վայրերում վառելիքի պակասությունը, մանավանդ վառելափայտի բացակայությունն ստիպում է հրաժարվել նկուղից, որովհետև վեց ամիս հարատևող ձմռանը դժվար է նկուղավոր բնակարանը տաքացնել և միապաղաղ ջերմություն ապահովել։

Այդ պատճառով էլ նկուղավոր բնակարաններն ի հայտ են գալիս գլխավորապես այնտեղ, ուր մուտք է գործում վառելափայտը, տորֆը, քարածուխը, ուր մասամբ տնտեսությունն ընդունել է կիսաայգեգործական բնույթ։

Եթե XVIII—XIX դարերում հայկական լեռնային շրջանների բնակարանների մի զգալի մասն ազատվեց կիսագետնափոր բնույթից, ապա սովետական տարիներին, նկուղների առաջացումով հիմք դրվեց գետնին կպած բնակարանները նկուղներով կառուցելու սիստեմին։

Այդ նույնը կարելի է ասել նաև լուսամուտների մասին։ Անկասկած, պատից բացվող լուսամուտների քառանկյունի, քառակուսի, կամարավոր, պայտաձև-կամարավոր և կլոր ձևերը հայտնի էին հայկական միջնադարյան թե՛ մոնումենտալ և թե՛ քաղաքացիական ճարտարապետությանը։ Սակայն ժողովրդի նյութական միջոցների և տնտեսության թույլ զարգացման հետևանքով

ժողովրդական տան մեջ դրանք հետագա զարգացում ու տարածում չեն գտել։ Այդ ձևերից միայն կլորը, քառակուսին ու քառանկյունին էին, որ ամենուրեք տարածված էին աշխատավորական շենքերի մեջ, որպես ձեղնահաններ՝ երդիկներ։ Սրանք ապահովվում էին կամ երկաթե ցանցերով և կամ ցանցերով ու տախտակե փակիչներով, որոնք հատուկ պարանով ներքևից քաշվելով երդիկը ներսից փակում էին։

Սովետական տարիներին դրանք ուրագորեն տեղի տվեցին տնտեսական նոր պայմանների, և կուլտուրայի զարգացման շնորհիվ լուսամուտավոր շենքերը լայն տարածում գտան։

Եթե անցյալում կնոջն ու նրա կենցաղը օտարներից թաքցնելու նպատակով հատ ու կենտ սենյակների լուսամուտները բացվում էին գլխավորապես բակերի վրա և ցանցապատվում, վարագուրապատվում էին, ապա սովետական տարիներին, հատկապես 1930—40-ական թվականներին ժողովրդական նոր տները հիմնովին մերժելով սովորույթից ելնող ձևերը, բազմատեսակ լուսամուտներ էին բացում սենյակների գրեթե բոլոր հնարավոր կողմերից։ Տնամերձ հողամասերի վրա կառուցված շատ բնակարանների (մասնավորապես շոգ վայրերում), չորս կողմից պատուհաններ էին բացվում։

Այգեգործական շոգ շրջաններում բնակչությունն այս բանը կապում է այգին տնից հսկելու, ինչպես նաև բնակարանը լույսով և օդի առատ հոսանքով ապահովելու հետ։ Եվ իրոք, ուր որ բնակարանները մեկուկես կամ երկհարկանի են, այնտեղ այգու մեջ հատուկ կերպով թառմա՝ կապելն ու հրսկելու համար քնելու հնամենի սովորությունը ինքնին վերացել է։

Ամրապինդ քարերով հարուստ շրջաններում լուսամուտների ու դռների պսակների, ինչպես և լուսամուտների գոգերի պատրաստման գծով բնորոշը մի ամբողջական քար օգտագործելն է, իսկ տուֆով հարուստ վայրերում՝ 3, 5, 7, կենտ քարերով պատրաստելը։ Վերջին ձևի դեպքում, ինչպես սովորական է ամենուրեք, կենտրոնական սեպաձև քարը (կապը) պսակին ամրություն է հաղորդում։ Այսպիսի պսակները, նայած տեղերի տրադիցիաներին, մեծ մասամբ ուղիղ են լինում։ Աղյուսաշեն բոլոր շենքերի համար դրանց փոխարինում են փայտե պսակները՝ հորիզոնական վիճակով։

Հայաստանում բացառություն է կազմում միայն Զանգեզուրը, ուր լուսամուտների և դռների պսակների պատրաստումն այլ ձևով է լուծվում։ Այստեղ թեև հանդիպում են 3 և 5 կենտ քարերով կամարաձև, թեթևակի կամարաձև և ուղիղ պսակներ, բայց բնորոշը և տարածվածն այն կամարավոր պսակներն են, որոնք պատրաստվում են իրար հենվող երկու, չորս կամ վեց քարով։ Երկու քարերի դեպքում սրանց իրար հենվող ծայրերը դեպի կողմ ելուստներ են ունենում, որոնք նպաստում են պսակի ամրությանը։

Մի քանի պատուհան ունեցող շենքերի վրա՝ երկուքարով լուծված այդ կամարաձև պսակների («թաղակապերի») քարերից ելուստների շարունակությունը կազմող մյուս քարերը կամարների հետ սեղմվելով, շենքի ամբողջ ճակատում մի կուռ գոտի են կազմում։ Նման մի գոտի էլ ստեղծում են լուսամուտների գոգերի ամբողջական քարերի հետ համաչարք կազմող քարերը։ Լուսամուտի այս տիպը Գորիսում ամենատարածվածն է։

Դիտելի է, որ Զանգեզուրում երկու քարով է լուծվել նաև օջախի կամա-

[1] Թառմա է կոչվում չորս ցցերի վրա պատրաստված մի տեղանի քնելատեղը, որ աշտարակի դեր է կատարում։

րի կառուցումը, հակառակ դրան՝ Հայաստանի մյուս բոլոր վայրերում դա մի ամբողջական քարից էր լինում։

Զանգեզուրը միակ էթնիկական ռայոնն է, որտեղ ժողովրդական ճարտարապետությունն ամենից ավելի է պահպանել պատուհանների և դռների ազգային ամենահատկանշական ձևը՝ կամարավորությունը, որն այժմ մեծ չափով կիրառվում է Հայաստանի սոցիալիստական քաղաքաշինության պրակտիկայում։

Լուսամուտների քարե և փայտե շրջանակներն ու փեղկերը հաճախ օժտված են փորաքանդակներով, ուռուցիկ և ակոսավոր քանդակներով։ Պսակների վրա հնագույն, հեթանոսական ու քրիստոնեական բովանդակություն ունեցող բազմատեսակ էմբլեմներին փոխարինել են հնգաթև աստղի, մուրճ ու մանգաղի, հայկական ու միութենական գերբերի էմբլեմները։ Կան նաև հին քանդակաղարդումներից ժառանգված կենդանական, բուսական և թռչնային զարդեր։

Դռների բնորոշ ձևը հնում միափեղկանիությունն էր։ Քաղաքային շինարարության ազդեցությամբ այժմ գյուղական բնակարանների դռները մեծ մասամբ երկփեղկանի են։ Նախկին միափեղկ համատարած դռներն այժմ ծառայում են բացառապես տնտեսական շենքերին։

Այսպիսով, հայկական գյուղական շինարարության մեջ դրականորեն են լուծված բնակարանները լուսավոր պատուհաններով, կուլտուրական ձևի դռներով, ինչպես նաև թարմ օդով ապահովելու հարցերը։

* * *

Կողմնակի կերպով արդեն խոսեցինք տների կահավորման այնպիսի ձևերի մասին, որոնք հիմնականում կապված են անցյալին պատկանող և սովետական ժամանակաշրջանում անցողիկ շրջանն ապրող բնակարանների ներքին պահանջների հետ։ Այժմ տանք կոլտնտեսականի ժամանակակից բնակարանի կահավորման եղանակի հակիրճ նկարագիրը, որը, ի դեպ, քաղաքային ձևերից տարբերվում է այնքանով, որքանով պայմանավորում է զբաղմունքը։

Գյուղական տան հիմնական կարասիներն են՝ մետաղե մահճակալները, հանդերձապահարանները, կամոդները, «հացի պահարանները», «հացի սընդուկները», ճաշասեղաններն ու նստարանները, գորգեղեն և կապերտեղեն փռոցները և այլն։

Մահճակալները սովորաբար դասավորվում են ննջարանի աջ ու ձախ կողմերում, պատերի տակ։ Հանդերձապահարանը կամ կամոդը դրվում է սենյակի «վերին» համարված ծայրի՝ աջքի ընկնող տեղում։ Որոշ տեղերում դրանց տեղումն է դրվում բուֆետը։ Հայելու սեղանը, որի վրա դրվում են հարդարվելու պարագաները, տեղավորվում է սենյակի երկու պատուհանների արանքում՝ պատի տակ։ Ճաշի սեղանը տեղավորվում է կամ թախտի մոտ և կամ սենյակի կենտրոնում։ Այն տեղավորվում է նաև նախասենյակում կամ սեղանատանը։ Ինչպես քաղաքներում, գյուղական ննջարաններում կամ նախասենյակներում ևս որմնատակերին տրադիցիոն կերպով դրվում են թախտեր, որոնց համար իբրև ծածկոց ծառայում են գորգերը կամ կապերտները։ Երբեմն սրանց վերևում գորգեր են կախվում, որոնց ծայրերը միաժամանակ ծածկում են թախտերը։ Թախտի ծայրերին թելքությամբ մութաքաներ և պատին մոտիկ ասեղնագործված կամ բանված հենաբարձեր ու զարդ-բարձիկներ

են դրվում։ Թախտի վերևից կամ այլ տեղից կախ արված գորգի վրա թեք դիրքով ասեղնագործություններ են ցուցադրվում։

Մահճակալները ծածկվում, զարդարվում են ֆաբրիկային կամ ընտանիքում ասեղնագործված ծածկոցներով, որոնց վրա 1—2 ասեղնագործված զարդ-բարձիկներ են դրվում։

Սենյակները տաքացվում են թիթեղյա վառարաններով։

Վառարանը սովորաբար դրվում է ննջարանում՝ դռանը մոտիկ մի տեղում, իսկ երբեմն էլ սեղանատանը։ Թոնրատուն խոհանոցները տաքացվում են թոնրի միջոցով։ Թոնիրով և վառարանով սովորաբար զբաղվում են տանտիկինները, և երբեմն էլ աղջիկները։

Ննջարաններում կամ մի այլ սենյակումն են տեղավորվում գրադարակները։ Լինում են նաև պատհան-գրապահարաններ (պատի խորշում բացված պահարաններ)։

Գյուղական ամանեղենները երկու կարգի են բաժանվում՝ կավե և փայտե ամաններ, որոնք սովորաբար պահվում են թոնրատանը, պատերի տակին պատրաստված տախտակների վրա, և նոր, ալյումինե, էմալապատ, ֆարֆորե և ապակե ամաններ, որոնք պահվում են առանձին պահարաններում, բուֆետներում։

Այն բոլոր շրջաններում, ուր լավաշ հացը թոնիրով միանգամից թխվում է 3—6 ամիս պահելու պայմանով, լինում են «հացի պահարաններ»։ Սրանք սովորաբար դրսում՝ պատշգամբներումն են դրվում։ Իսկ ամեն օր հաց թխելու սովորություն ունեցող շրջաններում կան «հացի սնդուկներ», որոնք պահվում են թոնրատանը։ Հացը երկար ժամանակ պահող գյուղերում սովորություն է նաև այն կախկալի[1] վրա դարսելը և դաստառակներով ծածկելը։

* * *

Ինչպես երևում է ներկայացված նկարագրից, Սովետական իշխանության տարիներին հայկական կոլտնտեսային գյուղացիության ժողովրդական տան ազգագրական փոփոխություններն ընթացել են երկու հիմնական ուղղությամբ։ Սովետական կարգերի հաստատման օրերից սկսած, երբ գյուղի մեջ կուլտուրական նշանակալից հեղաշրջում սկսվեց, և երբ ճարտարապետական հաստատությունները լիովին ի վիճակի չէին ուղղություն տալ ժողովրդական ճարտարապետությանը, գյուղացիությունն ապրում էր շենքերն ինքնակոմպլեքսավորելու, հին շենքերի մեջ ֆունկցիոնալ փոփոխություններ մտցնելու յուրահատուկ մի ժամանակաշրջան։ Այդ ժամանակաշրջանը կարելի է հասցնել մինչև 1930-ական թթ. կեսերը, իսկ լեռնային շրջաններում՝ մինչև 1930-ական թթ. վերջերը, թեև որոշ վայրերում այդ դրությունը հարատևում է նաև այժմ։

Երկրորդ էտապը ճարտարապետական նախագծումներով գյուղը վերափոխելու, այն պլանավորելու, տարերային զարգացման ուղուց միանգամից նպատակասլաց ուղղության վրա դնելու էտապն է, որը մեծ թափ ստացավ հատկապես հետպատերազմյան տարիներին։

[1] Կախկալը կշեռքի նժարի նման է, 50×120 սմ մեծությամբ, որ առաստաղից կախվում է չորս անկյուններին ամրացված թոկերով։ Այն պատրաստվում է ուռենու ճյուղերից հյուսված ցանցից կամ տախտակից։ Կախկալի սովորական տեղը մառանն է, ուր ծուխ չի լինում։

Այս նոր էտապումն էր, որ գրեթե ամբողջապես վերացան գլխատունննջարանները (դրանց հատկացնելով միայն խոհանոցի ֆունկցիան), երդիկավոր տներին փոխարինեցին լուսամուտավոր բնակարանները, որոնք անցյալում վայելում էին միայն շահագործողական դասակարգերը։ Առանձնապես այս շրջանումն էր, որ հայկական գյուղում բազմացան մեկուկես և երկհարկանի բնակարանները, նկուղավոր տները և առաջին անգամ տարածվեցին քաղաքային ձևի խոհանոցները՝ շնորհիվ էլեկտրիֆիկացման և նավթավառների տարածման։

Այդ ժամանակամիջոցում ժողովրդական ճարտարապետությունը ճարտարապետական նախագծումների օգնությամբ ձգտել է հասնել որոշ ստանդարտացման, հաշվի առնելով նաև երկրի կլիմայական և աշխարհագրական պայմանները։ Այս վերջին պայմանների շնորհիվ կոլտնտեսականների անձնական շենքերի կոմպլեքսները երկու հիմնական վարիանտներ են ներկայացնում։

Առաջին վարիանտը Արարատյան դաշտի և սրա մերձավոր շրջանների ու նման տաք կլիմա ունեցող մի քանի այլ բնակավայրերի կոմպլեքսն է։ Այս վարիանտում շենքերի կոմպլեքսավորումն ամբողջապես հաղթահարել է փակ բակերով սիստեմը և ստեղծել է բաց բակերով շենքերի կոմպլեքսներ։

Այդ վայրերում շենքերը մեծ մասամբ կոմպլեքսավորված են տնամերձ հողամասերի վրա։ Շենքերի յուրաքանչյուր կոմպլեքս իր ներսում ունենալով դարձյալ զանազան վարիացիաներ, ընդհանուր առմամբ հետևյալ պատկերն է ներկայացնում։ Բնակարանները բաղկացած են 1—4 սենյակներից, որոնք ընդհանուր առմամբ միջանցքավոր են։ Մեկ սենյականի բնակարանների միջանցքները տեղադրվում են այն կողմերում, ուր ապագա շինարարություն է նախատեսվում։ Երկհարկանի բնակարանները սովորաբար թե՛ առաջին և թե՛ երկրորդ հարկում միջանցքով բաժանվում են երկուական սենյակների։ Երկուսից ավելի սենյակներ ունեցող բնակարանները սովորաբար քառակուսի կամ գրեթե քառակուսի հատակագիծ են ունենում։ Լայնորեն տարածվել և տարածվում են նկուղավոր բնակարանները։ Հողամասի լայնությունից ելնելով՝ տնտեսական շենքերը կառուցվում են բնակարանների շարունակության վրա այնպես, որ ստացվում է քառանկյունի և երկարաձիգ հատակագիծ։ Հողամասը նեղ ճակատամաս ունենալու դեպքում, ընդհակառակը, տնտեսական շենքերը տեղավորվում են բնակարանների մի անկյունից սկսած՝ հողամասի երկարության ուղղությամբ, որով ստացվում է ամբողջ կոմպլեքսի ուղղանկյունաձև հատակագիծ։ Այս կոմպլեքսի մեջ տնտեսական հիմնական շենքերն են՝ հացատունը, երբեմն թոնիրով. թոնրատան խոհանոցային ֆունկցիան պգալի չափով կատարում է «հացի չարդախը», որ տեղավորվում է կոմպլեքսի ծայրամասում։ Հացատանը հաջորդում են հնձան-գինետունը, գոմը, մարագը, ցախանոցը։

Դաշտային շրջաններում, ամռանը քնելու համար բակում աշտարակ են ունենում, որը երբեմն բավարարում է փոքր ընտանիքների բոլոր անդամներին։

Շենքերի այս կոմպլեքսի համար բնորոշ է ամբողջ հողամասի ցանկապատումը, որ այգիները անասուններից ու ընտանի թռչուններից պաշտպանելու միջոց է ծառայում։ Դարբասը բացվում է հովարանից (դալան-ից), որը լեռնային բնակավայրերին հատուկ փակ բակերի հետագա վերամշակումն է։

Այն ներսի կողմից բուն շենքերից կտրված է ու ծառայում է որպես հանգստարան և ննջարան ամառվա շոգերի ժամանակ։

Լեռնային մի քանի վայրերում գյուղերի պլանավորման գանդաղ ընթացքի պատճառով շենքերն զգալի չափով կառուցվում են առավելապես ժողովրդական ճարտարապետության սկզբունքներով, ինքնակոմպլեքսավորման կարգով։ Թեև այստեղ ևս կիրառվում է բաց բակերով շենքերի կոմպլեքսների շինարարությունը, բայց բնորոշը դարձյալ փակ բակերի վերափոխումն է։ Քառանկյունի հատակագծերի վրա դասավորվում են սենյակները և տնտեսական շենքերը՝ մառանը, խոհանոցը (թոնրատունը), գոմը, մարագը։ Փակ բակին երբեմն փոխարինում են նախամուտքերը՝ նախկին երեսբաց չարդախները, որոնք երբեմն ունենում են դուռ։ Այս կոմպլեքսում նկուղները և բարձր ցանկապատերը հազվագյուտ են։

Անձրևայնության հանգամանքից ելնելով, լեռնային շրջաններում թիթեղապատ շենքերն արագորեն աճում են։

* * *

Բնակելի շենքերին առընթեր կառուցվող տնտեսական-օժանդակ շենքերը հայերին հայտնի են դեռևս հնագույն ժամանակներից, թեև տնտեսական դժվարության հետևանքով հաճախ այն բացակայել է։ Նյութական միջոցների և կուլտուրայի բարձրացման շնորհիվ, մասնավորապես Արևելահայաստանում, սկսած XIX դարից, տնտեսական շենքերն սկսել են շատանալ։ Դրանով հայկական տունն ավելի է ձգտել դեպի բազմաէլեմենտայնությունը։ Այս երևույթի է՛լ ավելի զարգացումը հայկական գյուղում տեղի է ունեցել սովետացումից հետո, կուլտուրական լայն շինարարության հետևանքով, և այն կապակցությամբ, որ աշխատավոր գյուղացու բնակելի շենքերն աստիճանաբար դադարեցին միաժամանակ տնտեսական շենքերի ֆունկցիան կատարելուց։

XIX դարում, ինչպես ասվեց, բնակարանների կոմպլեքսների դասավորության երկու հիմնական, միմյանցից զգալիորեն տարբերվող սիստեմներ կային։ Արևմտահայաստանում, մեծ մասամբ թյուրքական տիրապետության շրջանում, բնակարաններն ու արտադրական շենքերն ազատ տարածության վրա կոմպլեքսավորվում էին մի ընդհանուր, քառակուսի կամ քառանկյունի, (որոշ դեպքերում նաև ըստ տեղանքի՝ այլ ձևերի) մեջ, ծածկ ունեցող մեկ ընդհանուր բակով (սրահ-միջանցք)։ Փակ բակով ներտնային անասնատար և մարդատար ուղիները նույնանում էին։ Այդ է պատճառը, որ հայ ժողովրդի այդ հատվածի մեծամասնությունն այժմ էլ «բակ» տերմինն ըմբռնում է իբրև ծածկված շենք, (միջանցք) և ոչ թե տան առջևի բաց տարածությունը, ինչպես ըմբռնվում է արևելահայության մեծ մասի մեջ։

Արևելահայության զգալի մասի մեջ, ընդհակառակը, հայտնի են բաց բակերը։ Սրանք օժանդակ շենքերն անջատում են բնակարաններից։ Արարատյան դաշտն այդ երևույթի կլասիկ օրինակն է, որի տրադիցիաները կոլտնտեսային հասարակության մեջ սկսել են տարածվել նաև փակ բակերին սովոր շրջաններում։ Այս սիստեմի առավելությունն այն է, որ մարդատար և անասնատար ուղիները (սրահ-միջանցքները) առանձնանում են։ Բնակարանն առանձնանում է և ազատվում կեղտի ու վարակի աղբյուրներից։ Որոշ տեղե-

ռում շատ կոլտնտեսականների մոտ նույնիսկ ընդհանուր բակն էլ անասուններ չեն մտնում։

Մինչև 1930-ական թվականների սկիզբը, երբ Հայաստանի գյուղացիության համար բնորոշը մենատնտեսային կարգերն էին, արևմտահայ բնակիչների և որոշ ցուրտ տեղերի բնակչության մեջ փակ բակերով և արևելահայ հատվածի՝ առանձնապես ցածրադիր գոտիների բնակչության տրադիցիաներով ապրող շրջաններում բաց բակերով օժանդակ շենքերը կրկնում էին հին ձևերը։

Բնակչության կարողության համապատասխան՝ դրանք մասնավոր սեփականության թելադրանքով մեծանում էին և քանակապես ավելանում, առանց լուրջ փոփոխությունների, որովհետև օժանդակ շենքերը բնակարանների համեմատությամբ շատ ավելի պահպանողական են մնացել իրենց ձևերի առումով։ Տնտեսական շենքերի քանակական ու որակական փոփոխությունների շրջանն սկսվում է կոլտնտեսային կարգերի ստեղծման հիման վրա։ Սոցիալիստական այս տեղաշարժի հետևանքով մեծ գոմերը վերածվեցին փոքր կովանոցների, փարախները ոչ-անասնապահական վայրերում վերացան, իսկ անասնապահական վայրերում՝ միացվեցին կովանոցներին։ Անասունների քանակին համապատասխան կառուցվում են մարագներ. նկուղավոր բնակարաններում նկուղները փոխարինեցին մառաններին, գրեթե ամենուրեք գլխատները վերածվեցին անհատական ընտանիքներին սպասարկող թոնրատների, խոհանոցների, իսկ տաք կլիմա ունեցող վայրերում թոնրատներն զգալի չափով վերացան, որոնց փոխարինեցին քաղաքային ձևի խոհանոցները և «հացի չարդախները»։

Պլանավորման ենթարկված գյուղերում, ուր բնակարանային շինարարությունը կատարվում է ազատ տարածության վրա, կոլտնտեսականներն իրենց օժանդակ շենքերը կոմպլեքսավորել և կոմպլեքսավորում են մեծ մասամբ այնպես, որպեսզի հողամասի հարմար անկյունների վրա կառուցվեն բնակարանները, իսկ նրան առընթեր կամ որոշ չափով հեռու՝ օժանդակ շենքերը։ Բոլոր դեպքերում դասավորությունը կատարվում է այն հաշվով, որպեսզի ծուխ բարձրացնող թոնրատները կամ «հացի չարդախները» և անասնագոմերն ու հավանոցներն ընկնեն բնակարանի մաքրությունն ապահովող անկյուններում, իսկ մյուս շենքերը՝ ավելի մոտիկ։

Պետք է ասել, որ նոր բնակարանային շինարարության մեջ օժանդակ շենքերը քանակապես կրկնվում էին առավելապես կոլտնտեսային շարժման սկզբնական շրջանում, իսկ 1940-ական թվականների վերջերին կառուցված շենքերում կրկնություններն սկսել են կրճատվել։ Կրճատվածների հաշվին գոյանում են քառակուսի կամ քառանկյունի հատակագծի վրա կառուցված երկհարկանի տներ, որոնց ստորին հարկի բոլոր սենյակները, ինչպես ասվել է, ծառայում են իբրև օժանդակ շենքեր։